

Ազգային Պատրիարքարանի

ԱՏԵՆ Ա. Գ. ԲՈՒԹԻԻՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1882 ԱՄԵՆ

ՆԻՍՏ Բ.

17 ՅՈՒՆԻՍ 1882



Կ. ՊՕԼԻՍ

1882

ԴԻԻԱՆՔ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՄԱՅԲ ԴԻԻԱՆ

Յ. Մէրեւէմ-Գուլի էֆէնտի	Ա. Արեւ-դէր
Տօք. Յ. Թիրեաքեան էֆէնտի	Բ. »
Յովհաննէս էֆէնտի Թորոսեան	Գ. »
Միհրան էֆէնտի Չօպանեան	Ա. Արեւ-դէր
Աւետիս էֆէնտի Սուրենեան	Բ. »
Յակոբ էֆէնտի Պարոնեան	Գ. »

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1882 ԱՄԻ

Ն Ի Ս Տ Բ.

17 ՅՈՒՆԻՍ 1882

ՆՈՒՍԱՀ. — Տէր Սիմէոն Արքեպիսկոպոս Սէֆէրեան (—ժ—Դ—)

ԱՏԵՆԱՊԵՏ. — Քրիստոստուր էֆէնտի Ղազարոսեան (—ժ—Դ—)

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԿԵՂԵՍԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

Ա. Վիճակ

- 1 Սիմէոն Եպս. Սէֆէրեան
- 2 Ամբրոսիոս Վ. Ռուբինեան Բ Պ
- 3 Կարապետ Քհ. Սէթեան
- 4
- 5 Մատթէոս Եպս. Իզմիրեան Բ
- 6 Պօղոս Վ. Խօլտամեան
- 7 Յովհաննէս Քհ. Մկրեան
- 8 Գրիգոր » Աճէմեան Բ
- 9 Գրիգոր Եպս. Տ. Պօղոսեան Բ
- 10 Յակոբ Վ. Ա. Փափաղեան
- 11 Սահակ Քհ. Տ. Սարգսեան Բ Պ
- 12 Խորէն » Փէշլիվանեան Բ
- 13 Գէորգ Վ. Բուսճուզլեան
- 14 Եղիշէ » Այվազեան
- 15 Յովհաննէս Վ. Սրշարունի
- 16 Յովհ. Քհ. Հիւնքեարպէյէնտ.
- 17 Խորէն Արքեպ. Նար-Պէյ
- 18 Յովհաննէս Վ. Փափաղեան
- 19 Գարեգին » Թաթարեան
- 20 Սուքիաս Քհ. Ստեփանեան Բ

- Բ. Բացակայութիւն առաջին :
- Բ.2 » երկրորդ :
- Բ.3 » բանաւոր սլատճառաւ :

ՄԻՍՐԱՆՔ

Ա. Վիճակ

- Գուսմ-Գաբու, Կետիկ-Փաշա
- Եւ Գուսմ-Գաբուի դուրս
- 21 Գրիգոր Պէրպէրեան Բ
- 22 Կարապետ Աղարդմանեան
- 23 Համբարձում Մաղպուղեան Բ
- 24 Մինաս Գափամանեան
- 25 Բարթոլ Քիւրքճիպաշեան Բ 3
- 26 Գէորգ Ապտուլահեան
- 27 Յ. Մէրեւէմ-Գուլի
- 28 Տիգրան Հիւնքեարպէյէնտ. Բ
- 29 Աւետիս Սուրենեան
- 30 Տօքթ. Յ. Թիրեաքեան
- 31 » Այվազեան
- 32 Գէորգ Այվազեան
- 33 Յակոբ Եէմէնիճեան
- 34
- 35
- 36
- 37

Բ. Վիճակ

- Պէշիկթաշ
- 38 Ալիքսան Խորասանճեան Բ Պ
- 39 Բարսեղ Հալաճեան
- 40 Յովհաննէս Քէրէստէճեան Բ
- Եհնի-Գաբու
- 41 Լեւոն Քաջամանեան Բ 3
- 42 Մարուգէ Ֆրէնկեան Բ 2
- 43 Պօղոս Էնքոթեան Բ 3
- 44 Մկրտիչ Քիւրքճիպաշեան Բ Պ
- Իւսկիւտար Ս. Խաչ
- 45 Սիմէոն Ֆէլէկեան
- 46 Տօքթ. Յ. Շիշմանեան Բ Պ

47

48

- Իւսկիւտար Ս. Կարապետ
- 49 Միհրան Պանճէգափուլ
- 50 Պօղոս Թորգոմեան
- 51 Տրդատ Փափաղեան Բ
- 52 Յակոբ Հաճիեան Բ
- Գ. Վիճակ
- Գասըմ-Բաշա
- 53 Գասպար Չերաղ Բ
- Բերա
- 54 Գրիգոր Սէլիմյէճեան
- 55 Գրիգոր Օտեան Բ Պ
- 56 Ղազար Հովուեան
- 57 Յարութիւն Նորատունկ. Բ Պ
- 58 Յարութիւն Պէլեան
- 59 Նշան Պօյաճեան Բ 2
- 60 Վիշէն Օրմանեան
- 61 Տեղեմաք Էքսէրճեան
- 62
- Միջադիւղ
- 63 Յակոբ Պ. Նորատունկ.
- 64 Տիգրան Եուսուֆեան
- 65 Մկրտիչ Գաղանճեան
- 66 Մկրտիչ ճանրմեան Բ
- 67
- Պէյգօզ Եւ Ղալաթիա
- 68 Միքայէլ Մամիկոնեան Բ
- Գ. Վիճակ
- Քուզկունճուգ Եւ Իճատիէ
- 69 Մկրտիչ Մէղպուրեան Բ
- 70

22-58
75-787

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՂԵՍԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

Կ Ե Ղ Ե Ս Ա Կ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՂԵՍԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

3337

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՂԵՍԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՂԵՍԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

3337

Գատրգուղ
 71 Գառնիկ Յովակիմեան
 72 Կարապետ Հազարեան Բ
 Նարյը-Գաբու
 73
 Եկեղի-Մանայիկ Սամարիոյ
 74
 Թօփ-Գափու
 75 Տօբթ. Կ. Հիւնքեարպէյ. Բ
 Էյուպ Ս. Եղիա Ե. Ս.
 Աստուածածին
 76
 Գուբու-Չեշմե
 77 Համբարձում Իփէքճեան
 Հիսար Ե. Պօյաճի-Գիւղ
 78 Սենեքերիմ Կիւլպէնկեան
 Նոր-Գիւղ Ե. Սքեհիա
 79
 Պայատ
 80 Տիգրան Բարադամեան
 81 Մկրտիչ Կիւմլեան Բ
 82
 Քարակեօճիւիկ
 83 Յովհաննէս Թորոսեան
 84 Կարապետ Փանոսեան
 Ե. Վիճակ
 Սամարիա
 85 Ալիքսան Պէշիբեան
 86 Մինաս ձաֆճաֆեան Բ
 87 Նաղարէթ Շահպաղեան Բ
 88 Յարութիւն Թիւլեան
 89 Յակոբ Արշակ
 90 Սեպուհ Թիւյսիւղեան Բ
 91 Մինաս Էմիրեան Բ 2
 92 Թազուր Երկանեան
 93
 94
 Իասգիւղ
 95 Առաքել Աթուէ Տիւրրի Բ
 96 Սարգիս Քալուքճեան
 97 Ռէթէոս Թաղէոսեան
 98 Ռուբէն Պուլիուրեան Բ
 99 Նիկողոս Թիւլպէնտճ. Բ Պ
 400

ԳՈՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ
 Կարին
 101 Սերովբէ Ազնաւորեան
 Քեօրալեա
 102 Աւետիս Թնկրեան
 Աղբիախուպօլիս
 103 Յակոբ Պարոնեան
 Նիկոմիդիա
 104 Կարապետ Ս. Իւթիւճեան
 Ակն
 105
 Ղարանիսար
 106
 Արաբկիր
 107 Կարապետ Խաչիկեան
 Բաղէշ
 108
 Պրուսա
 109 Քրիստոստուր Ղազարոսեան
 Ենդոկիա
 110 Գէորգ Ասլանեան Բ
 Ամասիա
 111 Համբարձում Ալաճաճեան Բ
 Բալու
 112 Յովհաննէս Ազնաւորեան
 Եղեսիա
 113 Յակոբ Իւթիւճեան Բ 3
 Մանճրլըխ
 114
 Հաճըն
 115
 Երզնկա
 116 Ռէթէոս Պէրպէրեան
 Թէքիրտաղ
 117 Տիգրան Գ. Սինանեան
 Կեսարիա
 118 Գէորգ Քըլքճեան
 Խարբէրղ
 119
 Պայրքեաւր
 120 Ստեփան Գօշոբեան

Մուշ
 121 Ստեփան Փափաղեան Բ 3
 Տիվրիկ
 122 Նշան Գարագաշ Բ
 Զեյթուն Ե. Մարաշ
 123
 Տրապիզօն
 124 Գրիգոր Գալէմբեարեան Բ
 Պաղտատ
 125
 Տիգրանակերտ
 126 Միհրան Զօսանեան
 Վան
 127
 Աղբամար
 128
 Հայեղ Ե. Այնթապ
 129
 Սեբաստիա
 130 Մկրտիչ Յ. Մէլիքեան
 Ռուսճուգ
 131
 Կարս
 132 Արրահամ Յ. Այվաղեան Բ Պ
 Զմշկաձագ
 133
 Գաղատիա
 134
 Ատանա
 135
 Սղերղ
 136 Մատթէոս Ալէքսանեան
 Եօզղատ
 137 Լօղօֆէթ Պալեօղեան Բ Պ
 Մալաթիա
 138 Գէորգ Վարդանեան
 Իզմիր
 139 Պապի Պապօեան Բ
 Եգիպտոս
 140 Արրահամ Մուրատեան Ս

Օ Ր Ե Կ Ե Ր Գ

Ա. Վաւերացումն Երեսփոխանական ընտրութեանց .
 Բ. Ընտրութիւն Մայր-Իււանի .
 Գ. Ընտրութիւնք Նախաքննիչ-Իււանաց .

Ընդ առժամեայ նախադաճութեամբ Տ. Սիմէօն Եպիսկոպոսի, առժամեայ Ատենապետ Քրիստոստուր Էֆ. Ղազարոսեան ատենը կը բանայ ժամ 3 ին, ի ներկայութեան 47 Երեսփոխանաց որոց թիւն հետզհետէ ստուարանալով 59 ի կը յանգի :

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

1.
 [Հրաժարագիրք Վիլհէմ Էֆ. Գապարաճեանի Ե. Առաքել Էֆ. Ալբուն-Տիւրրիսի .

Ատենապետ Էֆ. Ժողովոյն կներկայէ Գապարաճեան Վիլհէմ Էֆ. ի հրաժարագիրը :

Առ Ամենապատիւ Փոխանորդ Հայր և Մեծապատիւ Ատենապետ Տէր ,

Յաւ ի սիրտ կը հարկադրուիմ ձանուցանել Ձեզ թէ, ինչպէս ասկէ առաջ տեղի ունեցած Ազգ. Ժողովոյ նիստերուն

բացակայ մնացի, նոյնպէս ալ յառաջիկայից ներկայ դռնուիլս անկարելի է, որովհետեւ չորս ամսէ ի վեր Հասարակաց կրթութեան նախարարութեան դուռը պաշտօնեայ կոչուելուս պատճառաւ, ժամանակն ու պարագայները չեն ներեր ինձ Ազգային Երեսփոխանութեան պատուաւոր անունն կրելու, ուստի խնդրեմ հրաժարեալ համարել զիս և արժաւաւոր անձի մը ընտրութեամբը, պակասաւոր թիւ լրացնել :

Մնամ խորին յարգանքօք :

Վիլհէմ Գապարաճեան

17 Յունիս 1882

ԱՆԻՔՍԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Գապարաճեան Էֆ. ի հրաժարագիրն կըսէ թէ՛ « ժամանակն ու պարագայներն չեն ներեր իրեն վարել զիւր պաշտօն », չեմ հասկնար թէ՛ ի՞նչ ըսել կուզէ ստույ, անշուշտ ուրիշ պատճառ մը կայ :

ուստի կը խնդրեմ Դիւանէն որ այս մասին բացատրութիւն տայ :

Տ. ՄԿՐԵԱՆ ՀԱՅՐ — Բացատրութիւն պահանջելու հարկ չեմ տեսներ ես, Գապարանէն էֆ.ի հրատարականը պարզ է, հետեւաբար կառավարկեմ զայն քուէի դնել :

Երեսփոխաններէ շատերն Տ. Մկրեան Հօր ձայնակցելով, Ատենապետ էֆ. քուէի կը դնէ Գապարանէն վիչէն էֆ.ի հրատարականը եւ ժողովը 2 ի դէմ մեծամասնութեամբ մը կ'ընդունին :

Յետոյ Ատենապետ էֆ. ժողովոյն կը ներկայէ Ալթուն Տիւրրի էֆ.ի հետեւեալ հրատարակիրը :

Գերապատիւ Ս. Հայր

Անձնական զբաղմունքներս այլ ևս չ'ներելով ինձ Երեսփոխանական պաշտօնս շարունակել և մանաւանդ այս միջոցին ճանապարհորդութիւն մ'ալ ընելու հարկին մէջ գտնուելով, կուգամ խնդրել Ձեր Գերապատութենէն որ հաճիք ներկայ հրատարակիրս հաղորդել Ազգ. Պատկառելի ժողովոյ յառաջիկայ նստին ի պարտու պատշաճ տնօրէնութիւն :

Մնամ մեծարանօք

Ա. Ա. Տէրրի

11 Յունիս 1882

Խասգիւղ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս կ'տեսնէք Ալթուն Տիւրրի էֆ. պարզ հրատարական մը կուտայ, ուստի պէտք է որ ընդունիմք զայն :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ի բաց առեալ զբաղմանց ծանրութիւնն որ օրինական

պատճառ մը չ'ի նկատուիր, քանի որ առժամանակեայ ճանապարհորդութեան պատճառաներիէ Երեսփոխանաց բացակայ մնալ ժողովէս, կառավարկեմ մերժել Ալթուն—Տիւրրի էֆ.ի հրատարականը :

ՁԱՅՆԵՐ. — Քուէ', քուէ' :

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊՍ. ՆԱՐ—ՊԷՅ. — Ալթուն—Տիւրրի էֆ.ի աշխատակցութիւնն խիստ կարեւոր է մեզի համար, ես կը կարծեմ թէ՛ ժողովս իւր ազգասիրութեան կոչումն ընէ յետս առնել տալու համար իւր հրատարականը, յաջողիմք :

ԷՔՍԵՐՃԵԱՆ Տ. ԷՖ. — Կառավարկեմ Տ. Խորէն Սրբազան Հօր յանձնարարել որ տեսակցելով Ալթուն—Տիւրրի էֆ.ի հետ, ետ առնել տայ իւր հրատարականը :

ԱԼԻՔՍԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Պահ մը առաջ նման օրինակ հրատարական մը հոս եկած էր, զոր ժողովը ընդունեց մինչդեռ Ալթուն—Տիւրրի էֆ.ի համար բացառութիւն մը ընել կուզուի, չեմ գիտեր թէ մեր այս ընթացքն համաձայն է ժողովոյս ներքին կանոնադրին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ալթուն—Տիւրրի էֆ.ի հրատարականի մասին եղած թեր ու դէմ խօսքերը լսեցինք, ուստի քուէի պիտի դնեմ զայն :

Հետեւաբար Ատենապետ էֆ. քուէի դնելով Առաքել, Ալթուն—Տիւրրի էֆ.ի հրատարականը ժողովը 19 ի դէմ 20 քուէով կ'ընդունի եւ կ'յանձնարարէ Խորէն Ս. Հօր որ զանի համոզելով ետ առնել տայ իւր հրատարականը :

ԱԼԻՔՍԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Չրկանք մ'էր տա իս ընդունել Երեսփոխանաց միոյն հրատարականն եւ մերժել միւսին :

2.

Բացակայութիւն

Ատենապետ էֆ. ծանուցանելով ժողովոյ, թէ՛ Ազգ. Երեսփոխաններէն Քիւրքճիլանը եւ Մկրտիչ էֆ.ի անձնական տկարութեան պատճառաւ, այս օրուան նստէն բացակայ գտնուելն զրով հաղորդած է Դիւանին, նշանակել տուաւ ներկայութեան տուժարին մէջ սոյն օրինական բացակայութիւնը :

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Ա.

Վաւերացումն Երեսփոխ. ընտրութեանց.

Տեղեկագիր Խարբերդու.

Ատենապետ էֆ. անմիջապէս օրակարգը ձեռք առնելով ժողովոյ կներկայէ Երեսփոխանական նորոգ ընտրութիւնները :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս կը յիշէք անշուշտ, Քարբերդու Երեսփոխանական ընտրութեան տեղեկագրոյն մէջ նշանակուած չ'ըլլալով ընտրողաց թիւն, վարչութեան յղուած էր այն, այժմ տեղեկագրոյն նոյն թիւին ամբողջացուած է եւ վարչութիւնը կը յայտնէ թէ, Խարբերդու գաւառական Ընդհ. ժողովն այժմ 31 անդամէ կը բաղկանայ, որոնցմէ 17 ին քուէով ընտրուած է Միսաբեան Պետրոս էֆ.

Այս բացատրութեան վրայ ժողովը հարկ չտեսնելով կրկին անգամ տեղեկագրին

ընթերցումն լսել, Ատենապետ էֆ. քուէի կը դնէ Պետրոս էֆ. Միսաբեանի ընտրութիւնը, զոր ժողովը կ'ընդունի միաձայն :

Հետեւաբար Ատենապետ էֆ. Խարբերդու Գաւառէն՝ Ազգային—Երեսփոխան կ'ընդունի :

ՉՊետրոս էֆ. Միսաբեան

Տեղեկագիր վաճառ.

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այժմ կարգը կուգայ վաճառ Երեսփոխանին ընտրութեան վաւերացման : Ինչպէս կը յիշէ ժողովը, ասկէ առաջ վաճառ Երեսփոխանական ընտրութեան համար Դիւանին յանձնարարութեամբ վարչութիւնը ընտրութեան հրահանգ խրկելով հետեւեալ տեղեկագիրն կ'ընդունի :

Ամենապատիւ Սրբազան Հայր Նախագահ Ազգային Կեդր. Վարչութեան

Ձեր Սրբազնութեան 137 թիւ նամակաւ Գաւառիս նախկին Երեսփոխան Մագսուտեան հրատարեալ վսեմ. Սիմօն Պէյլին տեղը նոր ընտրութեամբ գաւառական Երեսփոխան մ'ընտրել և ներկայել կը պատուիրէք. մինչդեռ Գաւառիս Երեսփոխանական ժողովն անցեալ 1880 Փետրուարի 23 ի Գ. նիստին մէջ Ազգ. Մահմանադրութեան գծած պայմաններուն համաձայն Աղապէկեան վսեմ. Մարկոս էֆ.ն գաւառիս Երեսփոխան ընտրելով՝ ազատ կը յուսայ լինիլ այդ պարտքէն :

Ահա նոյն նիստի քաղուածոյքն որ զայս կը հաստատէ :

25 Յունվար 1880 Նիստ Գ.

Նախագահ Տ. Երեմիա Սրբազան Ատենապետ Խորէն Խրիմեան

Օր-ի-բ-բ

Ա. Սրբազան Պատրիարք Հօր ձեռագիր
Բ. Վաւերացումն նորընտիր Երեսփոխանաց

Գ. Ատենական կանոններու ընթերցումն

Դ. Ընտրութիւն Կ. Պօլսոյ Երեսփոխանի

Առաջին օրակարգն լրանալէ յետոյ Ատենապետ Էֆ. օրակարգի դասակարգութիւնը փոխել կուզէ և ժողովոյ հաճութեամբ Դ. օրակարգը՝ Բին տեղ կանցնի և կառավարիչուի Դիւանին ընտրելեաց եռապատիկ ցանկը պատրաստել, ցանկը կը պատրաստուի և քուէարկութիւն կը լայ հետևեալ երեք անձանց վրայ, որք են՝ Վսեմ. Մարկոս Էֆ. Աղապէկեան, Մեծ. Վարդան Էֆ. Պապիկեան և Մեծ. Աբրահամ Էֆ. Սօլախեան որոցմէ ներկայ 30 Երեսփոխանաց 29 քուէովը և մէկ նամակաւ եկած քուէով Աղապէկեան Մարկոս Էֆ.ն գաղտնի քուէից բացարձակ առաւելութեամբ Գաւառիս Երեսփոխան ընտրուեցաւ :

Այս ընտրութիւն լրանալէ յետոյ նոյն թուով պաշտօնապէս կը ծանուցուի ևս Ազգ. կեդրոնական Վարչութեան և Աղապէկեան Էֆ.ի վաւերացումն կը խնդրուի :

Սրգ որովհետև Գաւառիս կողմէն ընտրելի Երեսփոխանն սոյն օրինական պայմանաց համաձայն ընտրուած և տեղեկագրուած է արդէն, աւելորդ մանաւանդ անպատեհ իսկ է վերստին նոր ընտրութիւն ընելու համար ժողով գումարել և այլն. այլ արդէն եղած ընտրութիւնքն Չեր Բաճրաչնորհ Սրբազնութեան ծանուցանելով չեմք տարակուսիր ամենևին որ պիտի բարեհաճիք յիշեալ Էֆ.ն յԱզգ. Ե.

րեսփոխանական ժողով հրաւիրել. ինչպէս նաև բաջայոյս եմք որ Աղապէկեան Էֆ.ն ևս յանձն պիտի առնու այս ընտրութիւնը և պիտի գործէ իւր կոչման և ազգասիրութեան համաձայն :

Եւ ամենախոնարհ ծառայ Չերգ Ամենապատիւ Սրբազնութեան

Առժմ. նախ. Գաւառ. երես. ժող. Վանայ ՍՐՈՒԱՆՑՅԱՆՑ ԳԱՐԵԳԻՆ Վ.

Դիւան երես. ժող. Վանայ Ատենապետ Բ. Ատենապետ Ն. Ճ. Է. Է. Ա. Է. Է. Է.

1881 Յունիս 2 Առաջն. Հայոց Վանայ

(Ցեա ընթերցման)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այս տեղեկագրոյն կցուած է Աղապէկեան Էֆ. ի յանձնառագիրն : Եթէ կուզէք զայն ալ կարդամք :

Ժողովը չուզէր լսել Աղապէկեան Էֆ. ի յանձնառագիրը. և Ատենապետ Էֆ. տեսնելով որ դիտողութիւն ընող չկայ քուէի կը դնէ Մարկոս Էֆ. Աղապէկեանի ընտրութիւնը, զոր ժողովը միաձայն կը վ.Ա.Ե.Բ.Է. :

Ուստի ևս Ատենապետ Էֆ. Վանայ Գաւառէն Ազգային — Երեսփոխան կը ՀՈՉԱԿԷ :

զՄարկոս Էֆ. Աղապէկեան :

(Յանձնառագիր ընտրելոյն)

Հայր Սուրբ Պատուական

Չեր Նոյ. 10 թուին գրած 840 թիւ նամակով հրաւիրած էիք ինձ փութալ ուղարկել Չեր իմ յանձնարարութեամբ Վանայ վիճակի կողմէն Երեսփոխան ընտրուելուս մասին :

Ահա՛ կը փութամ իմաց անել Չեր թէ՛ ես հաւան եմ, այդ իմ վերայ եղած ընտրութեան Վանայոց կողմէն և կընդունիմ Ազգ. Ընդ. ժողովոյն Երեսփոխանական պաշտօնը ստիպուած եմ ընտրողներ թախանձան հետ նրա համար որ հիւանդոտ եմ և անպաշտօն :

Խնդրելով Չեր աղօթարարութիւն իմ մասին մնամ Չեր ըարեկամ

Մարտի 12 Նոյ. 1881 Քանդակի

Հրաժարագիր Թ. Սարած Էֆ. ի յերեսփոխանութեան

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս կը յիշէք, անցեալ նստին մէջ Խաչիկ Սարած Էֆ. ի ընտրութեան տեղեկագիրն եւ իւր հրաժարագիրն կարդացուելով, յանձնուեցաւ Տ. Խորէն Սրբազանի որ համոզէ զինքն ետ առնուլ զայն, Դիւանս կը խնդրէ նորին Սրբազնութեանէն որ հողորդել բարեհաճի ժողովոյս իւր բանակցութեանց արդիւնքը :

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊՍ. ՆԱՐ—ՊԵՏ. — Խաչիք Սարած Էֆ. տեսնելով ջանացի հրաժարագիրն ետ առնել տալ, բայց չկրցայ համոզել զինքն և գրաւոր պատասխանել խօստացաւ եւ իւր կրկին հրաժարագիրն ի վերջէ ինձ յանձնելով ես ալ զայն Դիւանիդ յանձնեցի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խաչիկ Սարած Էֆ ի հրաժարագիրը լի է նախատանօք ընդդէմ ժողովոյս կուզէք որ կարդամք զայն :

ՁԱՅՆԵՐ — Այս. այս. . .

Ատենապետ Էֆ. կընթերցուեալ Խաչիկ Սարած Էֆ. ի հետևեալ գիրն :

Պերճաչնորհ, նախադաս Սրբազան Ազգ. Երեսփոխանական Պատկառելի Ժողով :

Ազգային Երեսփոխաններէն շատեր կըննց պաշտօնավարութեամբ ազգին օգտակար եղան, ես ևս այն համոզումն ունիմ, որ իմ հրաժարմամբ օգտակար պիտի ըլլամ թերևս :

Յաւէտ ինձ սիրելի եղող Քաղէչի վիճակէն կեդրոնական Երեսփոխան ընտրուելիս որչափ որ ինձ փառք է, նոյնքան և առաւել ցաւ է որ ինձ պէս սովորական կարողութեան աէր մարդ մը կը կոչուի աթոռ ունենալու այն ժողովին մէջ որ բովանդակ թուրքիոյ Հայերը ներկայելու սահմանուած է :

Ասկից առաջ իմ հրաժարագրովս յայտնել էի արդէն որ չպիտի կարենամ ընդունիլ զի Երեսփոխանութեան պահանջած անկախ գիրք և արժանիք կը պակսին յինէն :

Չի կարծուի՛ Սրբազան թէ համեստութեան համար կը դործածեմ այդ բառեր, ամբողջ շարաթներ մտածելէ յետոյ գրել եմ :

Մեր Ազգ. Սահմանադրութիւնը կը տրամադրէ որ Երեսփոխան ընտրուող անձը պէտք է որ երեսուն տարին լրացուցած և Օսմանեան հպատակ ըլլայ, բայց այսքան անեղբ և անորոշ սահման մը կըրնայ երաշխաւորել որ միշտ ընտիր Երեսփոխաններ պիտի տայ Ազգ. ժողովոյն. ապա ուրեմն պէտք է բնաւ զարմանալ երբ ակնարկ մը ձգելով անհուն տարբերութիւն տեսնելք տասն և հինգ քսան

տարի առաջուան և արդի երեսփոխանու-
թեան վիճակին վրայ :

Իմ ամենայնոն կարծիքն այս է
Հայր Արքայապետի որ ցայս վայր հասած
առավագորութիւնն յաւէտ քան երբէք
զնասակար է մանաւանդ մեր ազգին նը-
կասամամբ :

Տարիներ կ'անցնին ամուլ և ունայն
վէճերով գձուձ անձնականութիւններով,
մին զմիւսը ջրող որոշումներով, պատճա-
ռը հարկ է բացատրել, մեծ մասամբ
անկախ գրից և արժանեաց պակասու-
թիւնն է (բացառութիւնն յարգելի է
միշտ) և ահա թէ ինչու երեսփոխանու-
թիւնն հետզհետէ կը տկարանայ, արժա-
նաւոր աթոռներ թափուր կը մնան և
չատ անգամ 15-20 քուէով երեսփոխան-
ներ կընտրուին ազգին այս Գերագոյն
Ժողովին :

Ըստ իմ ամենախոնարհ կարծեաց
Հայր Արքայապետի պէտք է երեսփոխանա-
կան ընտրութեան և ընտրողութեան վե-
րաբերմամբ մեր Սահմանագրութեան ար-
բանագրած անսահման սահմանը փոքր
ինչ սեղմել և չափաւորել, պահանջել որ
ընտրողք գոնէ տուն մը ունեցած ըլլան
և փոխանակ 75 դրչ տուրք վճարելու,
գրել կարգալ գիտցողները քուէարկու-
թեան մասնակցին, պահանջել որ ընտ-
րողաց գոնէ կէսը անշուշտ մասնակցած
լինի քուէարկութեան, պահանջել որ
ընտրեալը նխապէս ըստ բաւականի ա-
պահով և անկախ վիճակ մ'ունենայ, պա-
հանջել որ ընտրեալը թողական, դպրո-
ցական, տնտեսական, դատական ելմը-
տական կրթական քաղաքական և այլն
ազգային պաշտօններ վարած և ինոսա
արդիւնաւոր և գովելի կեանք մ'ունե-

ցած ըլլայ և այնուհետև ընտրուի երես-
փոխան :

Իսկ եթէ իրաց այս տխուր վիճակը
չարունակուի — և զարմանալի չէ այս
զի պատճառին արդիւնքն է — և ընտ-
րուին այնպիսի երեսփոխաններ որք չա-
պիկ փոխելու պէս կարծիք փոխեն, դըժ-
բաղդարար արժանաւորագոյնք հետզհե-
տէ պիտի քաշուին ազգային դործերէ և
տակաւին պիտի կորսնցնէ երեսփոխանու-
թիւնն իւր յարգն ու պատկառը, և ինձ
նման սովորական մարդիկ չի պիտի պատ-
կառին նստիլ այն աթոռներու վրայ, որք
ազգին վիրաց և սրտին վերայ զետեղ-
ուած են :

Աւասիկ մտադիւր կը հրաժարիմ ես
և անոնք որ եթէ ոչ ազգին, գոնէ իրենց
անհատական վիճակը գիտնալու առաքի-
նութիւնն ունին կրնան քաշուիլ այս
խիստ մեծ և փափուկ պաշտօնէն, ար-
ժանաւորաց թողլով իրենց աթոռներն,
որպէս զի Ազգ. երեսփոխանութիւնն իւր
կոչման պատասխանէ — բոլոր :

Մատուցանելով միշտ իմ խորին ակ-
նածութիւն առ այն Գերագոյն Ժողով
ուժ կը նախագահէք եմ և մնամ Պերճա-
շընորհ Սրբազնութեանդ ամենախոնարհ
ծառայ :

Խաչիկ Յ. Սորոս

24 Մայիս 1882
Կ. Պոլիս

« Սոյն հրաժարագրոյն ընթերցումն ընդ-
միջուեցաւ երեսփոխանաց շատերուն կողմանէ
որք խօսք կուղէին թէ զիտողութիւն ընելու
համար եւ թէ կուղէին ընթերցումը դադա-
րեցնել բաւական է բաւական ընելով :

ԷՔՍԷՐՃԵԱՆ Ց. ԷՅ. — Մենք Սարած
Էֆ.է յանձնառագիր ուզած էինք եւ նա մեզ
կը յղէ հրահանգներ որք աւելի հրամանի ձեւ
ունին, այսպիսի զիտողութիւններ լրագրաց
միջոցու կարելի է ընել, բայց ոչ ժողովոյս
մէջ : Ուստի կառավարկեմ որ սոյն գրութեան
մէջ եղած զիտողութիւնքն մերժուելով լոկ
իբր հրաժարական ընդունուի եւ սոյն զիրն
ալ չանցուի ատենագրութեան մէջ :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՅ. — Էքսէրճեան
Էֆ.ի համակերպելով հանդերձ, կը յայտնեմ
թէ, մարդ մը անկախ գիրք ունենալու պար-
տաւոր չէ երեսփոխանութեան համար,
բաւական է որ ընտրեալն մաքուր խզնի տէր
եւ ազգասէր ոք լինին :

ԱԼԻՔՍԱՆԵԱՆ Մ. ԷՅ. — Ես կառավարկեմ
բոլորովին կարեւորութենէ զուրկ համարել զայն
եւ մինչև իսկ մերժման ալ արժանի չեմ տես-
ներ :

ՅԱՏՆ ՄԸ. — Եթէ քաջութիւն ունէր այդ
պարոնը, եւ փոխանակ հրաժարմամբ փախուստ
տալու թող գար հոս իւր սկզբունքները յա-
ռաջ տանէր :

ՓԱՆՈՍԵԱՆ Կ. ԷՅ. — Կառավարկուի բը-
նաւ ատենագրութեան մէջ չ'անցնել զայս գիր,
սակայն ինձ այնպէս կը թուի որ այս օրինակ
բան մը պատմութեան դէմ է, ուստի կրնամք
զայն արձանագրել, հանդերձ երեսփոխանաց
զիտողութեամբ :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՅ. — Ազգային ժողովը
հրահանգ չէ ուզած Սարած Էֆ. էն, այլ պա-
տիւ մը ըրաւ անոր, մերժելով հրաժարականը
իւր, ուստի իրաւունք չունի նա պատգամ
որոտալ այժմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Փանոսեան Էֆ. ի գի-
տողութիւնը իրաւացի է : վասն զի մինչև որ
նորա գրութիւնը չտեսնուի ատենագրութեան
մէջ. ընդդէմ խօսուածներն արդիւնք չեն ու-
նենար. ահա ինչպէս կը տեսնէք, Խաչիկ Սա-
րած Էֆ.ի հրաժարագիրն ատենագրութեան
մէջ անցնելու կամ չ'անցնելու մասին թեր ու
դէմ կարծիքներ կան, հետեւաբար ժողովոյդ
քուէին կ'ենթարկեմ զանոնք :

Քուէարկութիւն կատարուելով 10 ի դէմ
20 քուէով ժողովն ԿՈՐՈՇԷ Խաչիկ Սարած Էֆ.ի
հրաժարագիրն ընդունել, եւ անցնել զսոյն ա-
տենագրութեան մէջ հանդերձ երեսփոխանաց
զիտողութեամբ :

Խնդիր Ատանայի երեսփոխանի ընտրութեան.

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Մնցեալ նստին յանձ-
նարարուեցաւ Վարչութեան՝ Ատանայի երես-
փոխանական ընտրութեան թերին լրացնել տա-
լու համար հրահանգ տալ տեղւոյն Ընտրողա-
կան ժողովին : կը խնդրեմք Վարչութեան Ա-
տենապետ Էֆ.էն որ բացատրութիւն տայ մեզ
այս մասին եթէ ունի :

ԵՈՒՍՈՒՅԵԱՆ Ց. ԷՅ. — (Ատենապետ
Վարչութեան) ժողովոյդ որոշման համեմատ,
Վարչութիւնը անմիջապէս հետադրեց Ատա-
նայի Առաջնորդական տեղապահին, որ պա-
տասխանեց թէ տեղեկագրոյն նոյն թերին լը-
րացնել տալով պիտի յղէ ընդ փոյթ :

Տ. ԻՈՐԷՆ ԱՐԲԵՊԻՍ. ՆԱՐ-ՊԷՅ — կը խընդ-
րեմ ժողովն յանձնարարել Վարչութեան որ
կրկին հետադրէ յԱտանայ :

ԵՈՒՍՈՒՅԵԱՆ Ց. ԷՅ. — Ըստ իմ կարծեաց,
կրկին հետադրելու հարկ չկայ : Քանի որ Ընտ-
րողական ժողովոյ նախագահն յայտնի է թէ

« Տեղեկագրին թերին լրացնելով պիտի դրկէ՝
կրնամք զայս բաւական համարելով Մ. Զերազ
Էֆ. ի ընտրութիւնը վաւերացման ենթարկել
այսօր :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Կը ձայնակցիմ
Նուսուֆեան Էֆ. ի :

ՄԷԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Կրնամք տասն եւ
հինգ օր եւս սպասել որպէս զի տեղեկագրին
հասնի եւ այնպէս վաւերացնել :

ԶՕՊԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Ըստ իս, հարկ չեմ
տեսներ վերստին հեռագրաւ հրահանգ տալու,
քանի որ Առաջնորդական տեղապահն խօստա-
ցեր է տեղեկագրին Գաւառական ժողովոյ Գի-
ւանին ստորագրել տալով ուղղարկել : Ուրեմն
խիստ օրինաւոր կըլլայ մի քիչ եւս սպասել :

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍ. ՆԱՐ-ՊԷՅ — Ատա-
նայի Առաջնորդական տեղապահն Միքայէլ Ե.
պիսկոպոս՝ այժմ իւր տեղէն մեկնած է, ուստի
եթէ նոր անօրէնութիւն մը չընեմք, խնդիրն
կը յապաղի, ուստի խիստ գործնական է
կարծեմ խնդրել Վարչութիւնէն որ կրկին հե-
ռագրաւ հրահանգ տայ առ որ անկ է՝ տեղե-
կագրոյն փութացման համար :

ՆՈՒՍՈՒՖԵԱՆ Տ. ԷՖ. — Վարչութիւնը
իւր կարծիքն նախընթաց նստին մէջ յայտնեց
արդէն : Զարնուած հեռագրէն եւ եկած պա-
տասխանէն յետոյ, կը կարծեմ թէ կրնամք այ-
սօր իսկ վաւերացնել Մ. Զերազ Էֆ. ի ընտրու-
թիւնը, քանի որ տեղւոյն նախագահն կը խօս-
տանայ յղել տեղեկագրին ամբողջացուած,
իսկ եթէ հակառակն պատահի, այն ատեն կը
մտածեմք ընելիքնիս :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ես ալ Մ. Զերազ Էֆ. ին
արժանիքը կը ճանչնամ, բայց ամեն բանէ ա-
ռաջ պէտք է օրինապահ լինիմք : Քանի որ տե-

ղեկագրին չէ եկած՝ տակաւին, Գիւանս սոյն
ընտրութիւնը ժողովոյ վաւերացման չի կրնար
ենթարկել այսօր :

Հետեւաբար ժողովն մեծամասնութեամբ
ԿՈՐՈՇԷ յանձնարարել Վարչութեան որ վերջա-
տին հեռագրաւ պահանջէ Ատանայի Գաւառա-
կան ժողովէն Մ. Զերազ Էֆ. ի ընտրութեան
տեղեկագրոյն թերին լրացնելով յղել :

Վ. ԻՃԱԲԱՆՈՒՅԻՆ Ի ՎԵՐԱՅ ՓՈՒՓՈՒՍԱՐԵԱՆ
ՕՐԱԿԱՐԳԻ.

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Գիտէք որ մեր այսօր-
ուան օրակարգի երկրորդ խնդիրն է ընտրու-
թիւն Մայր-Գիւանի, որ կսկսի նախ Առաջին
Ատենապետի ընտրութեամբ :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Թէ եւ ըստ օ-
րակարգի՝ Մայր-Գիւանի ընտրութիւն կատարել
պարտիմք, սակայն կառավարկեմ որ ժողովս
զբաղի նախ Պատրիարքական խնդրով եւ ա-
պա անցնիմք Մայր Գիւանի ընտրութեան :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Եթէ օրակարգէն
դուրս խնդիրներ ձեռք առնուիմք, մեր ներ-
քին օրինաց դէմ գործած պիտի ըլլամք, ուս-
տի առժամեայ Գիւանս չէ կարող չեղիլ իւր
կանոնէն :

Տ. ՅՈՎ. Զ. ՔԱ. Ե. ՄԿՐԵԱՆ — Կանոնը գոր-
ծադրեցէք Ատենապետ Էֆ. եւ մէկուն խօսք
մի տաք այս մասին :

ՄԷԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Ստոյգ է թէ՛ առ
ժամեայ Գիւանին պաշտօնն է միմիայն Մայր-
Գիւանի կազմութեամբ զբաղիլ, բայց որովհե-
տեւ արդէն մի անգամ չեղեցանք կանոնական
տրամադրութենէն, Երեսփոխանաց հրաժար-
ման խնդրովն զբաղելով, կրնամք ուրեմն ը-

նել նաեւ նոյն բացառութիւնը Պատրիարքա-
կան խնդրոյն համար, մանաւանդ որ ասի բա-
ցառիկ պարագայ մ'է :

ԶՕՊԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Կանոնական տրա-
մադրութենէն շեղած չեմք, Երեսփոխանաց
հրաժարման խնդրով զբաղիլը ատենական գոր-
ծողութիւն է եւ ոչ օրակարգ :

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. ԷՖ. — Ես ալ կը փու-
թամ դիտողութիւն մը ընել : Քանի որ Մ. Զե-
րազ Էֆ. ի ընտրութիւնը վաւերացնելու հա-
մար այսչափ փոյթ կը տարուի եւ հեռագրի
կը զարնուի, ի՞նչու համար երեսի վրայ թող-
ուած է Պէկեան Թաղէոս Էֆ. ի ընտրութեան
վաւերացումը եւ Վարչութիւնը նորա տեղե-
կագրին չի բերէր ժողովոյս :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այս տեսակ զխտողու-
թիւններով ժամավաճառ կ'ըլլամք եւ գործ
չեմք կրնար տեսնել, Աւելի լաւ է որ անմի-
ջատէս մեր օրակարգին անցնիմք :

ԻՒԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Կը ձայնակցիմ Ա-
տենապետ Էֆ. ի, պէտք է օրակարգին անց-
նիլ անմիջապէս :

ՄԵՐԵՇՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Գիտեմ որ նե-
րելի չէ օրակարգէն դուրս խնդրոց վրայ խօսիլ,
ուստի եւ օրակարգի նկատմամբ ունեցած զի-
տողութեանս հակառակ լուծութիւն պահեր էի :
Բայց ըստ որում օրակարգին դէմ խօսուեցաւ
արդէն եւ տարբեր կարծիքներ յայտնուեցան,
կուզեմ համառօտիւ յայտնել Ձեզ իմ մտածու-
թիւնն :

Օրակարգն անփոփոխ պահել ուղղոյնբը
Պատրիարքական խնդրոց նախադասել ուղղո-
ներէն տարբեր նպատակ չունին : Մէկ մասն
անմիջապէս խնդրոց ձեռք առնուլ կուզէ, եւ
միւս մասն Գիւանաց ընտրութիւններն այժմ
կատարելով անյատպաղ խնդրոյն անցնիլ կուզէ :

նոյն իսկ այս նստին մէջ : Եթ ոչ մի եւ ոչ միւս
կարծիքը պաշտպանելու միտք ունիմ, այլ մի-
այն Զեր ուշադրութեան ներկայել կուզեմ ինչ
որ փորձառութիւնը մտածել կուտայ ինձ :

Այդ ընտրութեանց գործ մի քանի նիս-
տերով հազիւ կը լրանայ հրաժարմանց պատ-
ճառաւ, ուստի մի գուցէ ընտրութեանց ձեռ-
նարկելով ընդերկար յետաձգեմք Պատրիարքա-
կան խնդրոյն լուծումն :

Ես, ինչպէս ըսի, Զեր ուշադրութիւնը
զարթուցանելու համար կըսեմ զայս, որպէս
զի չկարծուի թէ մէկ նստի մէջ Գիւանաց ընտ-
րութիւններն ամբողջապէս կատարելու մեծ
հաւանականութիւն կայ, եւ այս հաւանակա-
նութեան վրայ չ'իմնուին կարծիքներն :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Կը հաստատեմ
Մէրեշմ-Գուլի Էֆ. ի ըսածներն :

ԱԼԻՔՍԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Ժամանակնիս
սուղ է, կառավարկեմ որ Գիւանը անմիջապէս
քուէի զնէ թէ՛ որ խնդրով նախ պիտի դա-
ղիմք :

ԻՓԷՔՃԵԱՆ Զ. ԷՖ. — Ուրախ եմ տեսնե-
լով որ իմ պաշտօնակիցներս նախանձախնդիր
են օրինաց գործադրութեան, սակայն կարճ
ճանքան գտած կըլլամք եթէ անմիջապէս Մայր
Գիւանի ընտրութիւնն կատարեմք եւ ապա
անցնիմք Պատրիարքական խնդրոյն :

Երեսփոխանաց շատերն կը ձայնակցին Ե-
փէլճեան Էֆ. ին :

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. ԷՖ. — Քանի որ ժողովս
զբաղեցաւ մի քանի Երեսփոխանաց ընտրու-
թեան վաւերացմամբ, կը պահանջեմ որ Գի-
ւանն վաւերացնել տայ նաեւ բոլոր Երեսփո-
խանաց ընտրութիւնքն եւ ապա անցնիլ ուրիշ
ո եւ է խնդրոյ : Պահ մը առաջ խօսեցայ արդէն
այս կէտին վրայ, բայց կը տեսնեմ որ ձայնս
լսելի չ'եղաւ Գիւանէն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ձեր առաջարկութիւնն նկատողութեան չ'առնիք, վասն զի նախ՝ երեսփոխանական վաւերացմանց խնդրոյն միջոցին չըրիք Ձեր առաջարկն եւ երկրորդ՝ այժմ իսկ Ձեր առաջարկութիւնն կրկնող եւ ոչ նորա դէմ խօսող եղաւ :

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍ. ՆԱՐ-ՊԷՏ. — Ահա ես կը ձայնակցիմ Սուրէնեան Էֆ.ի առաջարկին :

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. ԷՖ. — Հարկ չկայ որ իմ խօսքերս կրկնողներ ունենայ, ես պարզապէս օրէնքը ցոյց կուտամ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Թէ եւ կը ձայնակցի Տ. Խորէն Սրբազան Հայրն. սակայն Գիււանիս վրայ ուրիշ երեսփոխանի ընտրութեան տեղեկագիր մը չկայ որ վաւերացման ենթարկեմք. հետեւաբար կը հարցնեմ վարչութեան Ատենապետ Էֆ.ի թէ՛ ուրիշ ընտրութեան տեղեկագիր բերած է արդեօք :

ՆՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — (Ատենապետ վարչութեան) կը ցաւիմ որ փոքր դիւրիմացութիւն մը տեղի տուած է Սուրէնեան Էֆ.ի դիտողութեան : վարչութիւնս պարտք կը սեպէ յայտարարել թէ՛ երեսփոխանական ընտրութեանց տեղեկագրերն երբ հետզհետէ կ'ընդունի, անմիջապէս կը յանձնէ Գիււանիս, Հանդերձ իւր տեղեկագրով : Իսկ Սուրէնեան Էֆ. մտացած է անշուշտ որ Պէկեան Էֆ. իւր ընտրութեան տեղեկագիրն դեռ այս ժողովոյս չեկած, կրկին անգամ հրատարական տուած է, ուստի այլ եւս խնդիր չկրնար ըլլալ :

Ժողովը անհամբերութեան ցոյցերով Նուսուրէնեան Էֆ.ի խօսքերը կ'ընդմիջէ եւ բաւական է ըսելով օրակարգին անցնել կուզէ :

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. ԷՖ. — Խօսք կուզեմ Նուսուրէնեան Էֆ.ի պատասխանելու համար :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խօսք չեմ կրնար տալ, վասն զի թէ մեր այսօրուան խնդիրն այդ չէ եւ թէ ժողովն շուղեր լսել :

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. ԷՖ. — Գոնէ կը խնդրեմ որ արձանագրել տաք թէ՛ այս խնդրոյն վրայ խօսք ուղած եմ եւ չէ տրուած ինձ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Շատ լաւ : Այժմ ձեռքը երեսփոխանք, ինչպէս դիտէք, Մայր-Գիււանի ընտրութեան պիտի ձեռնարկեմք, սակայն ուրիշ առաջարկութիւններ ալ կան զորս քուէի պիտի դնեմ : Աւստի կը խնդրեմ որ երեսփոխանք գրաւոր ներկայացնեն դայնս :

ՆՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — Ըստ իս, խնդիրն այնքան կ'ընտան չէ որ գրաւոր ներկայացնելու պէտք ըլլայ : Մէկ կողմէն կառաջարկուի անմիջապէս Պատրիարքական խնդրով գրադիլ, իսկ միւս կողմանէ երկու առաջարկութիւնք կան, այն է կամ Մայր-Գիււանի ընտրութիւնը կատարել միայն կամ օրակարգին հետեւիլ, այս վերջին երկու առաջարկութիւնք կրնան հաշտուիլ իրարու հետ, որով խնդրոյն լուծուող կը դիւրանայ :

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍ. ՆԱՐ-ՊԷՏ. — Ես կը խնդրեմ որ երեք առաջարկութիւններն ալ զատ զատ քուէի դրուին :

Գալիամաճեան Մ. Էֆ. իւր հետեւեալ գրաւոր առաջարկը կը ներկայացնէ Գիււանիս :

Կառաջարկեմ առաջնութիւն տալ Պատրիարքական խնդրոյն և ապա կատարել Մայր-Գիււանի ընտրութիւնը :

Մ. Գալիամաճեան

Ատենապետ Էֆ. քուէի կը դնէ նախ սոյն առաջարկութիւնը որ 13 ի դէմ 32 քուէիք ԿԸ ՄԵՐԺՈՒԻ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Գալիամաճեան Մ. Էֆ.ի առաջարկութիւնը մեծամասնութեամբ չընդունուելով, պիտի ձեռք առնուիք Մայր-Գիււանի ընտրութիւնը եւ ապա անմիջապէս պիտի անցնիմք Պատրիարքական խնդրոյն :

Ատենապետ Էֆ. տասն վայրկեան դադարի մը համար ատեանը կը փակէ, որպէս զի երեսփոխանք խորհրդակցելու ժամանակ ունենան :

Բ.

Կազմութիւն Մայր-Գիււանի.

Տասն վայրկեան դադարէն յետոյ, Ատենապետ Էֆ. վերստին ատեանը բանալով, թուէհամարի քննիչ կը կարգէ վիճակաւ՝

- Եղիշէ վարդ. Այվազեան
- Յովհաննէս վարդ. Արշարունի
- Աւետիս Էֆ. Սուրէնեան
- Աւետիս Էֆ. Թնկրեան

Եւ կը հրաւիրէ զերեսփոխանս Ա. Ատենապետի ընտրութեան համար իրենց քուէն տալու :

Քուէարկութիւնն ու քուէհամարը կատարուելով, ասոնց արդիւնքը կը յայտնէ որ՝ Ա. Ատենապետութեան համար 51 քուէարկուաց քուէներէն ստացած են

- Յ. Մէրեէմ-Գուլի Էֆ. 31 քուէ
- Տօրթօր Յ. Թիրեաքեան Էֆ. 12 »
- Ջանազան անձինք 8 »

սոյն քուէարկութեան մէջ ձեռնպահ կը մնան Փանոսեան Կարապետ եւ Գալիամաճեան Միւսաս Էֆ.ք :

Ատենապետ Էֆ. քուէարկութեան արդիւնքը ծանուցանելով ժողովոյն, անոր օրինաւորութիւնը քուէի կը դնէ որ ԿԸՆԳՈՒՆՈՒԻ միաձայնութեամբ :

Հետեւաբար Ատենապետ Էֆ. ժողովոյ Առաջին Ատենապետ կը ՀՈՉԱԿԷ՛

դՅարութիւն Էֆ. Մէրեէմ-Գուլի :

ՉՕՊԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Մէրեէմ-Գուլի Էֆ. անձնական գրաւմանց ասթիւ ստիպեալ ըլլալով ժողովէս մեկնիլ, ինձ յանձնարարեց յայտնել ժողովոյդ որ եթէ ժողովոյս քուէն զուրկ չէր յուսար, վերստին զինքն Ատենապետ ընտրէ, ինքը չպիտի կրնար ընդունիլ այս տարի ևս վարել սոյն պաշտօնը վասն զի նիւթապէս ժամանակ կը սպակէր իրեն :

Տ. ՅՈՎ. ՔԱՀ. ՄԿՐԵԱՆ. — Նոյն խօսքերը ինձ ևս բաժնէ Մէրեէմ-Գուլի Էֆ. : սակայն իւր ազնիւ բնաւորութիւնն է որ այս յայտարարութիւնը ընել կուտայ իրեն կարծեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այդ յայտարարութիւնն ընելով զուք բարեկամական պարտք մը կատարած կըլլաք, բայց քանի որ ժողովս իւր ըստուար մեծամասնութեան քուէով վերընտրած է զՄէրեէմ-Գուլի Էֆ. Գիւանս՝ և ոչ իսկ երեսփոխանս կուզեն ըսել այդպիսի մերժում մը :

Երեսփոխանք միահամուռ կը ձայնակցին Ատենապետ Էֆ.ի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այժմ պիտի կատարեմք երկու Գեր-Ատենապետաց ընտրութիւնը : Քըուէթուղթերուն մէջ պիտի գրուին երկու ա.

նուն, որոյմէ առաւելագոյն բուէ ստացողը պիտի լինի Բ. Ատենապետ և անկէ անմիջապէս նուազ բուէ ստացողն Գ. Ատենապետ :

Քուէարկութիւնն ու բուէհամարը կատարուելով արդիւնքն կը լինի :

Թիւ քուէարկուաց 47

- Տօրթօր Յ. Թիրեաբեան ԷՖ. 33 բուէ
- Յովհաննէս ԷՖ. Թորոսեան 24 »
- Քրիստ. ԷՖ. Ղազարոսեան 16 »
- Յակոբ ԷՖ. Արշակ 12 »

և մնացեալ բուէներն 7 ն անձանց վրայ 4 էն մինչև 1 տարածեալ :

Սոյն քուէարկութեան մէջ ձեռնարկ կը մնան փանոսեան կորապետ և Գաբումանեան Մինաս ԷՖ. ր :

Ատենապետ ԷՖ. քուէարկութեան արդիւնքը ժողովին հաղորդելով, անոր օրինաւորութիւնը բուէի կը դնէ նախ, որ կԸՆԳՈՒՆՈՒԻ միաձայնութեամբ :

Հետեւորար Ատենապետ ԷՖ. Բ. Ատենապետ կը ՀՈՉԱԿԷ զՏօրթօր Յ. Թիրեաբեան ԷՖ. և Գ. Ատենապետ՝ զՅովհաննէս ԷՖ. Թորոսեան :

Թէև Թորոսեան ԷՖ. բաժարցակ բուէ ըստացած չէր, սակայն Ատենապետ ԷՖ. այս մասին ժողովը հաւանութիւնն ստանալով Գ. Ատենապետ կը ընտրուի :

Այս Ատենապետ ԷՖ. կը հրաւիրէ զՆերսիսիան և Եսայան բուէ պատրաստել երեք Ատենապետաց համար :

Քուէարկութիւնն ու բուէհամարն կատարուելով, արդիւնքը կը լինի :

Թիւ քուէարկուաց 47

- Միհրան ԷՖ. Չօլանեան 31 բուէ
- Աւետիս ԷՖ. Սուրէնեան 24 »
- Յակոբ ԷՖ. Պարոնեան 18 »

և մնացեալ բուէներն 13 անձանց վրայ 16 էն մինչև 1 տարածեալ :

Թէև Սուրէնեան և Պարոնեան ԷՖ. իր բաժարցակ առաւելութեամբ բուէ ստացած չէին, սակայն ժողովը կհաստատէ անոնց ընտրութիւնը :

Սոյն քուէարկութեան մէջ ձեռնարկ կը մնայ Գաբումանեան Մինաս ԷՖ. :

Ատենապետ ԷՖ. քուէարկութեան արդիւնքը ծանուցանելով, անոր օրինաւորութիւնը բուէի կը դնէ որ կԸՆԳՈՒՆՈՒԻ միաձայնութեամբ :

Հետեւորար Ատենապետ ԷՖ. Ա. Ատենապետ կը ՀՈՉԱԿԷ զՄիհրան ԷՖ. Չօլանեան, Բ. Ատենապետ կը Աւետիս ԷՖ. Սուրէնեան և Գ. Ատենապետ կը Յակոբ ԷՖ. Պարոնեան :

Թէև Չօլանեան և Սուրէնեան ԷՖ. իսօսը կը խնդրէն բայց ժողովը չուղեր զանոնք ընել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Մայր-Դիւանի ընտրութիւնն կատարուեցաւ և ահա ժողովը կը ներկայացնէմ զայն որ է՝

- Ա. Ատենապետ Յ. Մէրեէմ-Գուլի ԷՖ.
- Բ. » Տօր. Յ. Թիրեաբեան ԷՖ.
- Գ. » Յ. Թորոսեան ԷՖ.

- Ա. Ատենապետ Մ. Չօլանեան ԷՖ.
- Բ. » Ա. Սուրէնեան »
- Գ. » Յ. Պարոնեան »

և զանոնք ընտրութեամբ կարողութիւն կը մաղդէմ :

Յետոյ Ատենապետ ԷՖ. ի առաջարկութեամբ և Նախագահ Սրբազանի հրաւիրանօր Բ. Ատենապետ Տօր. Յ. Թիրեաբեան ԷՖ. ի բացակայութեան Յ. Մէրեէմ-Գուլի ԷՖ. ի կանցնի յաթոս Ատենապետութեան, ընտրահալութիւն յայտնելով Երեսօթանոց համակրական ցոյցերէն : Նոյնպէս Մ. Չօլանեան և Ա. Սուրէնեան ԷՖ. ք կը ձեռնարկեն իրենց Ատենապետական պաշտօնին :

Գ.

Ինչիք հրաժարման Ս. Պատրիարք Հօր .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ժողովոյդ որոշման համեմատ Մայր-Դիւանի ընտրութեանէն յետոյ պիտի զբաղէինք, ինչպէս կը յիշէք, Պատրիարքական խնդրով : Բայց ժամանակն անցած լինելով, ժողովոյդ կը ձգեմ որոշել թէ այժմ անմիջապէս կուզէ ձեռք առնուլ այս խնդիրը, թէ ո՛չ յառաջիկայ նստին :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Պատրիարքական խնդիրն յաջորդ նստին թողու հարկ չեմ տեսներ, կարճ վիճարանութեամբ մը կրնամք վերջացնել զայն, ուստի կառաջարկեմ անմիջապէս սկսիլ Պատրիարքական խնդրոյն վիճարանութիւնն :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՖ. — Ես կը կարծեմ թէ՛ Պատրիարքական խնդիրն վերջացած է մեզի համար, քանի որ ժողովն քանիցս մեր .

ժած է Պատրիարք Սրբազանի հրաժարականներէն ինչպէս Բ. Գուռն ալ չէ ընդունած զայն : Պէտք է նախ արձանագրուին հոս բոլոր այն վտանակեալ գրութիւնք և զործողութիւնք որք տեղի անեցան վերջի մի քանի շաբաթից մէջ, ոչ-օրինական նստերու որոշմամբ, յետ այնու կրնամք զբաղիլ այդ խնդրով :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը խնդրեմ Քրիստոստոսը ԷՖ. ք որ երբ Պատրիարքական խնդրոյն վիճարանութեան մտնեմք, այն ատեն յայտնէ իւր կարծիքներն : Այժմ խնդիրն այն է թէ՛ սոսոր ժամանակ ունի՞մք վիճարանելու այս խնդրոյն վրայ թէ ոչ :

Տ. ՅՈՎ. ԲԱԷ. ՄԿՐԵԱՆ. — Մեր գլխաւոր օրակարգն Պատրիարք Սրբազանի հրաժարման խնդիրն է, ժամանակնիս ներէ կամ ոչ, ստիպողականաբար կառաջարկեմ անմիջապէս խնդրոյն մէջ մտնել :

ՁԱՅՆԵՐ. — Քուէի զրէք, քուէի զրէք :

Ատենապետ ԷՖ. տեսնելով որ բուէ ուղղներն կշատնան, քուէի կը դնէ խնդիրը որ 5 ի դէմ 23 բուէով կՈՐՈՇՈՒԻ անմիջապէս ձեռք առնուլ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՖ. — Կառաջարկեմ որ նախ ոչ-օրինական նիստերու մէջ եղած զործողութիւնք և տեղեկագիրք հաղորդուին ժողովոյս և արձանագրուին ատենապետականց մէջ :

ՁԱՅՆԵՐ. — Կը կրկնեմք :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ըստ իս հարկ չկայ այդ գրութիւններն մի անգամ ևս կարողա՞ն հոս, իւրաքանչիւր Երեսօթանի ծանօթ

են, բառական սեպեմբ աստենագրութեան մէջ անցընել զանոնք :

ԹՈՐՈՍԵԱՆ Յ. ԷՖ. — Դիտել պիտի տամ որ Պատրիարքական խնդրոյն յարակից է նաև Ատենագրեաց Գիւանի ընտրութիւնը : Այս Դիտմը, ինչպէս կը յիշէք, մեծ դեր կու տարած է սոյն խնդրոյ մէջ, հետևարար կ'առաջարկեմ որ նախաքննիչ Դիւանաց ընտրութեան յետոյ անցնինք Պատրիարքական խնդրոյն :

ԻՓԵՔԱՅԱՆ Է. ԷՖ. — Մեր մասնաւոր նխատերուն մէջ Ատենագրեաց Գիւանը գործ չունեցաւ, ուստի վերջէն կրնամք կատարել այդ ընտրութիւնները :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՖ. — Գափամաձեան էֆ.ի առաջարկութիւնը չեմ ընդունիր : Այլ կը սնդեմ իմ առաջարկութեանս վրայ, այն է, Ս. Պատրիարք Հօր մատուցուած Ազգերմն, անոր պատասխանը և խնդրոյս յարակից բոլոր թղթերն հաս կարգաւ :

ՊԵՐՊԷՐՍԵԱՆ Բ. ԷՖ. — Եղած գործադրութիւններն հաս պատմուելու հարկ չեմ տեսներ ես, որովհետև ամբողջ Ազգային Ժողովն էր որ գործեց վերջի աստեններս և Պատրիարք Սրբազանի դիմեց : Մեզնէ խրաքանչիւրն տեղեակ է սոյս ամենուն, ուստի բառական կրնամք համարիչ Ազգերմն և Ս. Պատրիարք Հօր պատասխանագրոյն արձանագրութիւնքն :

ՄԵԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Երկու կարծիքներ կը յայտնուին Երեսփոխանաց կողմանէ, միջին կէտը զանելու համար կ'առաջարկեմ որ Ազգերմն և պատասխանագրոյն միայն կարգացուին :

ԱՅՆԱՊԵՏ ԷՖ. — Քանի որ Մեզիքեան էֆ.ի առաջարկութիւնը բարեփոխութիւն մ'է

միւս առաջարկութեանց, քուէի պիտի դնեմ զայն : Անոնք որ կ'ազեն Ազգերմն և Ս. Պատրիարք Հօր պատասխանագրոյն 'ի Դիւանէ ընթերմու մը, կը խնդրեմ յայտնել խրեանց ձեռամբարձ հաւանութիւնը :

Ժողովն միաձայն կՈՐՈՇԷ լսել նոյն երկու գրութիւններն :

Հետևարար Ատենագրի էֆ. կ'ընթեանու Երեսփոխանաց կողմանէ Ս. Պատրիարք Հօր մատուցուած Ազգերմն :

Բարձրաշնորհ Ս. Հայր.

Ազգ. Ժողովն, փափարող Ձեր Սրբազնութեան ձեռաց մէջ տեսնելու Ազգ. իշխանութեան զեկն, յետ լսելոյ իւր վերջին նատին մէջ իւր Ատենագրեաց Դիւանի տեղեկագիրն, ի վերայ խնդրոյ Ձեր հրաժարման, հետևեալ բանաձևն քուեարկեց :

« Ազգ. Երեսփոխանութիւնն, զիտնալով սոյն վիշտեր որք Ս. Պատրիարք Հայրն ասիպած են հրաժարիլ, բայց ճանչնալով նաև իւր մեծ արժանիքն ու Ժողովրդեան իւր վերայ ունեցած անհուն համակրանքն ու վստահութիւնն, կը յայտնէ ն. Սրբազնութեան թէ՛ ընդունելով սկզմամբ իւր Ատենագրեաց Դիւանի եզրակացութիւններն, ինք պատրաստ է յանուն Ազգին յանձն առնուլ այն զոհողութիւններ որք նորա կարողութեան հետ հաշտ են և որք կրնան իւր վիշտն թեթեւցնել լաւագոյն կարգադրութիւն մի տալով իրաց ներքին վիճակին, և դիւրացնել իւր պաշտօն, բարեխընամ կառավարութեանն սպասելով

վստահութեամբ այնպիսի վշտաց ակտիւմն, որոց դարման իւր կարողութեանն դուրս է, հետևարար կը խնդրէ որ Ս. Պատրիարք Հայրն, գոհացուիմ տալով Ազգին փափարանաց, հաճի ձեռք առնուլ վերստին Պատրիարքական պաշտօնն և գործակցիլ ու առաջնորդել Ազգին ջանից » :

Ազգային Երեսփոխանութիւնն սոյն յայտարարութեամբ և ի վստահութեամբ Ձեզ դիմեց Մայիս 23 կիրակէ օր, և խնդրեց Ձեր Սրբազնութեանն որ Ազգին բազմակարօս վիճակին ու զոհողութեանց այս յանձնառութեան առջև հաճիք յետս կոչել Ձեր հրաժարականն և ընուլ Ժողովոյս ու Ազգին բաղձանքներն :

Յաւօք սրտի տեսաւ սակայն, թէ Ձեր Սրբազնութիւնն դարձեալ անդեց իւր հրաժարականի վերայ, զայն անդառնալի հրատարակեց, մերթ իւր անձնական տրակարութիւնն և մերթ պաշտաման դրժուարութիւնքն, անբառնալի պատճառցոյց տուաւ իւր հրաժարականին և վերջապէս սրտաբեկ արձակեց զԵրեսփոխանութիւնն :

Սակայն, Բարձրաշնորհ Ս. Հայր, ո՛չ Երեսփոխանութիւնն և ո՛չ Ազգն կը հաւատայ թէ Ձեր անձնական տիրութիւնն և Պատրիարքական պաշտաման դժուարութիւնքն անբառնալի արդեւքներ են Ձեր պաշտօնավարութեան : Նոքա ուրախութեամբ կը տեսնեն որ Ձեր Սրբազնութեան առողջական վիճակն այժմ գոհացուցիչ է, սմա հետ միանալով այն հաստատուն յոյս թէ նոր զոհողութիւնք, ազգու միջոցներ, զորս Ազգն այնքան աւելի սիրով ի գործ պիտի դնէ որչափ տեսնէ վերստին իւր սիրելի Պատրիարքն իւր դահուն վերայ

պիտի յաջողին իրաց լաւագոյն վիճակ մի ստեղծել և դիւրել Պատրիարքական իշխանութեան կիրառութիւնն : ոչինչ կը մնայ լրջօրէն համոզելու զԱզգ և զԵրեսփոխանութիւն թէ բացարձակապէս անկարելի ըլլայ Ձեր Սրբազնութեան համար Պատրիարքական պաշտօնի յանձնառութիւնն :

Ուստի, Բարձրաշնորհ Ս. Հայր, Ազգային Երեսփոխանք Մայիս 23 ի ձեռնարկին ապարդիւն ելքէն յետոյ, ի խորհրդակցութիւն գումարուելով, որոշեցին միանգամ ևս դիմել Ձեր Սրբազնութեան և խնդրել վերստին որ բարեհաճիք տեղի տալ այն հանրական բաղձանաց որք կը յայտնուին ընդհանուր Ազգին մէջ ի նպաստ Ձեր Պատրիարքութեան և որոց թարգման լինելէ չէ դադրած Ազգ. Երեսփոխանութիւնն որ զիտէ գընահատել Ձեր անուրանալի ծառայութիւններն և Ձեր անժխտելի կարողութիւնն :

Սրբազան Հայր, Ազգ. Երեսփոխանութիւնն, առ ի փարատել զամենայն թիւրիմացութիւն, կը յայտարարէ հանդիսապէս թէ՛ երբէք խանդարուած չէ այն ներդաշնակութիւնն որ զօգած է զինքն իւր Բարձրաշնորհ Նախագահին հետ, և թէ պատրաստ է շարունակել իւր օժանդակութիւնն Ձեր ազգօգուս խորհրդոց իրականացման, և Ձեր առաջնորդութեամբ աշխատիլ ազգային օրինաց բարեք գործադրութեան, մեր նուիրական իրաւանց պահպանութեան և Հայ Ժողովրդեան յառաջագիմութեան ժամանակին պահանջմանց և ազգին պիտոյից համաձայն պէտք եղած ներքին բարեկարգութեանց մըլուժ տալով :

Ազգային Երեսփոխանութիւնն աներկրայ է թէ Չեր Սրբազնութիւնն ինչպէս մինչև ցարդ՝ ևս առաւել այժմու վիճակին մէջ ազգին օգուտն, շահերն ու անդորրութիւնն միայն կէտ նպատակի ունենալով, պիտի բարեհաճի անօրինել զարժանն, չը խնայելով ի դորձ գնել զամենայն հնարաւոր զօհողութիւն և միջոցներ, որպէս զի ոչ Երեսփոխանութիւնն և ոչ Չեր Սրբազնութիւնն կարենան պատասխանատու նկատուիլ այն տխուր հետեանաց որք բնականաբար կրնան յառաջ գալ՝ սոյն օրինակ պարագայից մէջ, և որոց վրայ Չեր իմաստնախոհ ու շաղթութիւնն հրաւիրել պարտանձին կը համարիմք :

Սրբազան Տէր, երբ Ազգին ընդհանուր բաղձանաց հակառակ յարատեւք պնդել Չեր հրաժարականին վերայ, Երեսփոխանութեան շատ դժուար պիտի լինի ելից հնարք մը գտնել՝ առանց Չեր Բարձր օժանդակութեան, որով կարելի լինի դժացնել միանգամայն զՉեր Սրբազնութիւնն և զԱզգին : Դիւրին է Չեղ մակարերել թէ առանց սոյն դորձակցութեան կրնայ Երեսփոխանութեան զօրութիւնն յայարդիւնութիւն դատապարտուիլ, Ազգ, Վարչութիւնն ընդարմանալ և տեղ տրուիլ այնպիսի գէպքերու, որք Ազգին համար աղէտարեր լինին :

Հետեաբար իրաց այս ձգտեալ վիճակին մեջ Ազգային Երեսփոխանութիւնն կը փութայ կոչումն ընել Չեր Սրբազնութեան ազգասիրական զգացմանց, և խնդրել որ, իբր Հայր մ'ազգին, բարեհաճի շնորհել իւր օժանդակութիւնն ներկայ տազնապալից կացութեան ելք

մի գտնելու համար, յայտնելով միանգամայն թէ լաւագոյն և ամենէն ընդհանրապէս բաղձացեալ ելքն Չեր Սրբազնութեան վերադարձն է յախճա Պատրիարքութեան :

Մատուցանելով Բարձրաշնորհ Սրբազնութեան Չերում մեր խորին մեծարանքն, պատիւ ունիմք կրկնել մեր ջերմ համակրանաց սերտ արտայայտութիւնքն

Ազգային Երեսփոխանք,

(Ստորագրութիւնք)

(Յեռ ընդհանր)

Տ. ԽՈՐԷՆ ԱՐԲԵՊԻՍ. ՆԱՐ-ՊԵՏ. — Ըստ սրբազան տրուած էր ինձ, իբր Նախագահ սոյն Ուղերձին Խմբագիր Յանձնաժողովոյն, մատուցանել զայն ի դիմաց Երեսփոխանութեան առ Ս. Պատրիարք Հայրն, պարտք կը համարիմ պաշտօնապէս յայտնել ժողովոյդ Ս. Պատրիարքի պատասխանը :

Ս. Պատրիարք Հայրն ընդունելով Երեսփոխանաց պատգամաւորութիւնն, և լսելով Ուղերձն, մեր ամեն ջանից հակառակ, յայտնեց թէ 1881 Նոյեմբեր 13 էն ՚ի վեր հրաժարած է իւր անձնական տիրութեան և անբաւականութեան պատճառաւ, և թէ չի կրնար ետ առնուլ իր հրաժարականը : Պատգամաւորութեան կրկին և կրկին թախանձանաց վրայ Ներսէս Պատրիարք խօստացաւ նոյն գիշերը միանգամ ևս խորհրդածել և երկրորդ օրը իւր պատասխանն յղել զրուար կերպով : Սոյն յատարարութեան վրայ մեկնեցանք և յաջորդ օրն ընդունեցաւ Ս. Պատրիարք Հօր նամակն զոր ահա կը ներկայացնեմ ժողովոյդ :

Պատուական Տեառք Երեսփոխանք Հայոց օրհնեալ Ազգին :

Չեր Մեծապատուութեանց առ իմն անարժանութիւն յղած ուղերձը ընկալայ

մեծաւ երախտագիտութեամբ այսօր՝ ձեռամբ արժանընտիր Պատգամաւորաց Չերոց, այդ պերճահիւս ուղերձին համար իմ խորին շնորհակալութիւններս մատուցանելով պատուական Երեսփոխանագր՝ կը սարտաւորիմ ամենայն անկեղծութեամբ կրկնել նոյն խօսքերն զորս պատիւ ունեցայ Մայիս 23 ին խօսիլ Չեղ և Քողովրդեան՝ թէ ոչ Երեսփոխանական և ոչ ս և իցէ ժողովոյ հետ աններդաշնակութեան և ոչ ինչ և իցէ պատճառաւ՝ այլ իմ տկարութեանս և անբաւականութեանս համար՝ որ ուրիշներէն աւելի ինձ յայտնի է, 1881 Նոյեմբերի 13 էն ՚ի վեր հրաժարեալ եմ ՚ի պաշտամանէ պատրիարքութեան՝ ուր արդէն տկամայ կոչուած էի. և կը խնդրեմ որ շնորհք ընէք փութանակի յաջորդ մը ընտրել ինձ՝ որ է միայնակ հնարք ելից, Այսու առթիւ կը յայտարարեմ թէ այս պատճառաւ խռովութեան թեւադրիչներն են միմիայն պատասխանատու առաջի Աստուծոյ և մարդկան և պատմութեան : Մաղթելով ջերմերմ աղօթիւք առ Աստուած՝ որ Չեր պատուական Ուղերձին մէջ տեսնուած աղգօգուտ խոստումներն իմ յաջորդիս օրովն իրանան՝

Մնամ սիրելի Ազգիս և Չեր Մեծապատուութեանց համար միշտ օրհնող և աղօթարար խոնարհ ծառայ

ՆԵՐՍԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

1882 Յունիս 10

՚ի Խաասղիւղ

(Յեռ ընդհանր)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Լսեցիք Պատրիարքական խնդրոյն առթիւ եղած բանակցութիւններն և փոխանակուած գրութիւնը : Այժմ ժողովոյդ կը մնայ իւր կարծիքն յայտնել այս մասին :

ԻՓԷՔՃԵԱՆ Հ. ԷՅ. — Երկայն ըսելիք չունիմ այս մասին : Ինչպէս արդէն յայտնած էի մեր ոչ-օրինական նստին մէջ, կառաջարկեմ յանձնարարել Վարչութեան որ Բ. Գրան գիւրծ գրաւ ետ առնել տալու համար նորա հրաժարականը, սակայն ցաւօր կը տեսնէ թէ՛ իւր ջանքերն ապարդիւն մնացին և հրահանգ խնդրէ Անտի : Եթէ ժողովը ընդունի սուսըտիւթիւնս, անշուշտ սոյն իմաստ թագրիւրի մը խմբագրութիւնը ձեռնադրու մարմնոյն պիտի յանձնէ :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՅ. — Արդէն մի և նոյն առաջարկութիւնը պիտի ընէի զոր ներկայ յայտաց Իփէքճեան ԷՖ., ուստի իջ ձայնակցիմ իրեն :

Տ. ՅՈՎ. ՔԱՀ. ՄԿՐԵԱՆ. — Արդէն ոչ-օրինական նստերու մէջ բաւական խօսեցանք և ըմբռնեցինք թէ՛ մեր պարտքն է այսուհետեւ Բ. Գրան խմբոյնը Ս. Պատրիարք Հօր հրաժարականը, վստահ ՚ն. Սրբազնութիւնը Բ. Գրան և Ազգին միանգամայն տուած է զայն : Մեր իբր հօրատակ ազգ՝ պէտք է խմայնեմք Բ. Գրան թէ՛ 1881 Նոյեմբեր 13 էն ՚ի վեր Պատրիարքին հրաժարած է և թէ մեր ամեն ուղերձներն անօգուտ եղած են զայն ետ առնել տալու համար : Այժմ ելից հնար մը գտնելու համար բարեխնամ Վստափարութեան աջակցութիւնը պէտք է հայցել : Եւ որովհետեւ Բ. Գրան և Ազգին միջև Վարչութիւնն է միջնորդ, ինքը

պէտք է ներկայացնէ այս աղերսագիրը , ի միասին առնելով նաև կրօնական և աշխարհական Երեսփոխաններ ալ :

ՄԷԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Սկզբամբ կընդունիմ Տէր Մկրեան Հօր առաջարկութիւնը , թէ պէտք է Բ. Դրան դիմեմք ելից հնարմը խնդրելու համար : Սակայն նկատելով որ Ս. Պատրիարք Հօր հրաժարականը միմիայն Ազգային շրջանակին մէջ խնդիր եղած է , նկատելով որ Պատրիարքն մեզ պարզ իսկ Բ. Դրան պատճառաբանեալ հրաժարական տուած է , և նկատելով որ այս մասին մեր ամեն բանակցութիւնք ասպարդիւն ելած են , կ'առաջարկեմ Բ. Դրան կարեկցութեան դիմել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Որոշեցէք թէ Բ. Դրէն կարեկցութիւն հայցելու եմք թէ խնդրելու եմք որ ետ առնուլ տայ Ս. Պատրիարքին հրաժարականը :

ՄԷԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Պարզապէս Ազգին վիճակին վրայ կառավարութեան կարեկցութիւնը հրաւիրել . այս է իմ եզրակացութիւնս :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Բ. Դրան դիմելու առաջարկութիւն կայ և այս ալ վարչութեան կը պատկանի ինչպէս գիտէք , բայց ոմանք կը պահանջեն որ Երեսփոխանք ալ միանան վարչութեան : Խնդիրն շճապաղելու համար կը խընդրեմ որ այս երկուորդ կէտին վրայ կարծիքներն իրարու հետ հաշտեցնէք :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՖ. — Նախ Ազգ-Ժողովն Պատրիարքական խնդրոյն մէջ ընտրութիւն մը ընելու իրաւունքն ունի Ժողովը կընտրէ Պատրիարք , բայց վաւերացումը Բ. Դրան կը պատկանի , մանաւանդ այս հրաժարականը որ ուղղակի Բ. Դրան մատուցուած է և Ժողովոյս ալ ծանուցուած , մենք չեմք կրնար ընդունիլ զայն , մինչև որ Բ. Դուռն ընդունած

չլլայ : Արդ կառաջարկեմ որ Պատրիարքական Փոխանորդն և Ազգային վարչութիւնն Բ. Դուռն երթալով իրաց դարման մը խնդրեն : Ես Երեսփոխանաց ընկերակցութեան հարկ չեմ տեսներ :

ՊԵՄԵԱՆ Յ. ԷՖ. — Ես ալ նոյնը կառաջարկեմ յաւելում մը ընելով միայն , այն է յայտնել Բ. Դրան թէ մեր ջանքերը ասպարդիւն մընացած լինելով , ամբողջ Ազգն և Երեսփոխանութիւնը կը խնդրէ Ներսէս պատրիարքն , որոյ ներկայութիւնը անհրաժեշտ է :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՖ. — Այդ ամենը պարտ ու պատշաճ ձևերու տակ միայն կրնան ըսուիլ , մենք Դրան օրէնք չեմք կրնար սովորեցնել :

ԹՈՐՈՍԵԱՆ Յ. ԷՖ. — Պատ. Երեսփոխանաց յայտարարութիւնքն գովելի են , քանի որ մեր սիրելի Պատրիարքը իւր անձնու վերադառնալու կը յանգին : Մինչև ցայսօր ամեն բան ըրինք , ուղերձ և ազաչանք անօգուտ եղան : Բ. Դրան դիմելը չեմ ըսեր թէ օգտակար չէ , սակայն կը տարակուսիմ թէ պիտի յաջողիմք արդեօր ասով մեր փափարաց վախճանին հասնիլ : Անշուշտ համոզուողներ կան թէ այս միջոցն արդիւնաւոր պիտի լինի , կը խնդրեմ որ բացատրեն ասկից յառաջ գալիք օգուտներն :

ԱՅՎԱԶԵԱՆ Գ. ԷՖ. — Ես ալ Մկրեան Հօր և Մէլիքեան ԷՖ.ի համակարծիք եմ , իսկ Թորոսեան ԷՖ.ի գալով , Պատ. պաշտօնակիցս կ'ըսէ թէ ամեն միջոցի դիմեցիմք : Արդարև շատ բան ըրինք , սակայն Բ. Դրան ցարդ չեմք դիմած , ուրեմն այս վերջի փորձն ալ ընեմք և տղաչեմք բարեխնամ կառավարութիւնը որ մեր ազգին վերաբերեալ կարգ մը խնդիրներն ալ կարողադրէ որով գուցէ Ս. Պատրիարքը ետ առնու իւր հրաժարականը :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Սրբազան Պատրիարք Հօր հրաժարականը մերժելու համար , ինչ որ կարելին էր ըրաւ Ազգային Ժողովը , սակայն ամեն փորձ ընդունայն եղաւ : Եւ ինչ որ ալ ըլլայ , Ժողովս չպիտի կրնայ լուծուիմ տալ այս խնդրոյն , որովհետև կրնայ ըլլալ որ Պատրիարքի հրաժարականը Ազգն ընդունի և Դուռն չընդունի կամ Դուռն ընդունի և Ազգն չընդունի : Ասոր համար էր որ մեր երեքշարթի օրուան ոչ-օրինական գումարման մէջ Բ. Դրան դիմելու առաջարկութիւն ներկայացուցի : Սակայն քանի որ կարծողներ կան թէ Բ. Դրան առջև ալ Ս. Պատրիարքն պիտի պնդէ իւր հրաժարականին վրայ , ուրեմն այս միջոցն ալ ասպարդիւն պիտի լինի :

ԻՓԷՔՃԵԱՆ Զ. ԷՖ. — Թորոսեան ԷՖ. բացատրութիւն կը պահանջէ թէ ինչ օգուտ պիտի ունենայ Բ. Դրան դիմելիս : Ես կը յուսամ որ եթէ Թորոսեան ԷՖ. լաւ մը խորհի , այսպիսի բացատրութեան մը հարկ չիպիտի տեսնէ :

Իրաց արդի վիճակին մէջ , ամենէն օգտակար միջոցն է կարծեմ յանձնարարել վարչութեան որ Թագրիք մը պատրաստելով , յառաջիկայ հինգշարթի օր Ժողովոյս վաւերացման ենթարկէ :

ՁԱՅՆԵՐ. — Ո՛չ , ո՛չ , վարչութիւնը կըրնայ ուղղակի Բ. Դրան ներկայացնել , հոս բերելու հարկ չիկայ :

Տ. ՅՈՎ. ԲԱԶ. ՄԿՐԵԱՆ. — Թորոսեան ԷՖ. կուզէ գիտնալ թէ Բ. Դրան դիմելով յայտնէ « մեր վիճակը , թէ Ս. Պատրիարքը կը հրաժարի և հակառակ Ազգին ընդհանուր բողձանաց « կը կրկնէ իւր հրաժարում , և որովհետև Ն. « Սրբազնութիւնը Բ. Դուռն ալ հրաժարական « մատուցած է , ուստի Ազգ. Ժողովը կը յանձնարարէ վարչութեան որ բերանացի Բ. Դրան ներկայացնէ Ազգին վիճակը « Երեսփոխանութեանն ալ պատգամաւորութիւն մը հետ « առնելով » :

կարենայ յառաջիկայ հինգշարթի օրն Ժողովոյս բերել Բ. Դրան պատասխանը :

ԹՈՐՈՍԵԱՆ Յ. ԷՖ. — Կրնայ ըլլալ որ Տ. Մկրեան Հայրն և ես տարբեր տեսակետներով դիտեմք սոյն միջոցը , բայց քանի որ յայտարարեց թէ Բ. Դրան պիտի դիմեմք տեղեկութիւն տալու համար , այս մասին կը համակերպիմ իւր առաջարկութեան :

ՁԱՅՆԵՐ. — Քուէ , բուէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Տակաւին երեք շորս Երեսփոխանք խօսք ուղած են սոյն խնդրոյն վրայ , սակայն բուէ ուղղներ ալ կան . և որովհետև օրս ալ տարածամած է , Ժողովոյդ բուէին պիտի ենթարկեմ ուրեմն վիճաբանութեան շարունակութիւնը կամ փակումը :

Հետևարար Ատենասպետ ԷՖ. բուէի դնելով , Ժողովը 4ի դէմ 16 բուէով վիճաբանութեան փակումը ԿՈՐՈՇԷ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ժողովը մեծամասնութեամբ որոշեց , ինչպէս տեսաք , վիճաբանութեան փակումը : Այժմ կը մնայ բուէի գընել Տ. Մկրեան Հօր հետևեալ զրաւոր առաջարկութիւնն որ արդէն կրկնուեցաւ Երեսփոխանաց շատերու կողմանէ :

« Ազգային Ժողովը կը յանձնարարէ Ազգ. « վարչութեան որ Բ. Դրան դիմելով յայտնէ « մեր վիճակը , թէ Ս. Պատրիարքը կը հրաժարի և հակառակ Ազգին ընդհանուր բողձանաց « կը կրկնէ իւր հրաժարում , և որովհետև Ն. « Սրբազնութիւնը Բ. Դուռն ալ հրաժարական « մատուցած է , ուստի Ազգ. Ժողովը կը յանձնարարէ վարչութեան որ բերանացի Բ. Դրան ներկայացնէ Ազգին վիճակը « Երեսփոխանութեանն ալ պատգամաւորութիւն մը հետ « առնելով » :

(ՅԷՔ ԸՆԹԵՂՈՎ)

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Տ. Մկրեան Հօր առաջարկն էսպէս չի տարբերիր մերինէն. Վարչութիւնը կուզէ ընկեր առնու իւր հետ կուզէ չ'առնու, ազատ թողումը զինքն սյս մասին:

ՄԵԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Տ. Մկրեան Հօր գրաւոր առաջարկութեան մէջ իմ յաւելուածս չկայ, այնէ Բ. Գրան կարեկցութիւնը հրաւիրել Ազգին վրայ: Ասկից զատ, բերանայի Բ. Գրան գիմելու համակարծիք չեմ, ես կառաջարկեմ որ Վարչութիւնը գրաւոր կերպիւ ներկայացնէ Բ. Գրան մեր աղերսը:

(Մի քանի նստարաններէ մերժման ցոյցեր):

ՄԵԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — (շարունակելով) կառաջարկեմ նաև սարտաւորել զՎարչութիւնըն որ մի քանի բարձրատիճան Եկեղեցականաց ընկերակցութեամբ ներկայանայ:

ԵՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — (Ատենապետ Վարչութեան) Երեսօրտան Տեարայ ամենուն ալ յայտնած կարծիքը գրեթէ նոյն կէտին կը յանդի, այն է մեր գերագոյն իշխանութեան Բ. Գրան գիմել և իրաց դարման մը խնդրել, քանի որ Ազգ. Ժողովն ութ ամսէ 'ի վեր չկրցաւ ետ առնուլ տալ Ս. Պատրիարք Հօր հրաժարականը: Սակայն սոյն որոշումը պէտք է տալ այնպիսի եղանակու մը որ մեր Սահմանադրական իրաւանց չվնասէ: Արդ, կամ վստահութիւն ունիք ձեր Վարչութեան վրայ կամ ոչ, եթէ չունէնաւ յիշ, խնդիրը կը տարբերել, բայց քանի որ վստահութիւն կը յայտնէք և Վարչութեան կը յանձնարարէք գիմել Բ. Գրան, իրեն թողուցէք նաև Ազգ. Ժողովը խնդիրը գրաւոր կամ բերանայի յայտնելու եղանակն, և ի միասին բարձրագոյն կղերականներ առնու կամ չառնու ընտրութիւնն:

Մեր պարտքն է Ձեր որոշումը սրտա ու պատշաճ եղանակաւ գործադրել և Բ. Գրան պատասխանը հաղորդել ժողովոյդ:

ԱՅՎԱՋԵԱՆ Գ. ԷՖ. — Վարչութեան հետ յատուկ պատգամաւորութիւն մը միացնելը, յարգանք մը ընծայել է Բ. Գրան և ոչ թէ Վարչութեան նկատմամբ անվստահութիւն մը:

ԵՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Եթէ այս կէտին վրայ վիճարանութիւն բացուի, կրնան այսպիսի կարծիքներ յայտնուիլ որ անյարմար երևին, ուստի Վարչութեան խոհեմութեան յանձնեցէք գործադրութեան եղանակը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խնդիրն բաւական կը դիւրանայ եթէ Տ. Մկրեան Հայրն իւր առաջարկութեան մի քանի մասերն ուզէ բարեփոխել:

(Ատենապետ ԷՖ. վերադառնալ կը կարգայ Տ. Մկրեան Հօր առաջարկութիւնն):

Տ. ՅՈՎ. ՔԱՀ. ՄԿՐԵԱՆ — Այո՛ կ'ընդունիմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն կրնամք վերջի պարբերութիւնը ստպէս բարեփոխել. «Վարչութիւնը կրնայ երեսօրտանութենէ ալ մի քանի անձեր հետ առնուլ եթէ պատշաճ դատի»:

ՊԵՐՊԵՏԵԱՆ Ռ. ԷՖ. — Վարչութիւնը ուղղակի Ս. Պատրիարքէն ընտրուած լինելով, նորա անդամներն Պատրիարքական անձինք կը սեպուին: Արդ՛ եթէ կուզէք որ Ազգային ժողովը բաղձանքն ներկայանայ Բ. Գրան, լաւ է որ կրօնական և աշխարհական երեսօրտաններէ պատգամաւորութիւն մը ընկերակցի Վարչութեան: Մենք արդէն վարչութիւնն ալ Պատրիարքին հետ հրաժարեալ կը նկատուք և նորա պաշտօնն առժամանակեայ:

ԵՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Պէտքէրեան ԷՖ. ի կարծեաց մէջ սխալ մը կը նշմարեմ, արդարև Պատրիարքը ընտրած է զՎարչութիւնն, սակայն երեսօրտանական ժողովը վաւերացուցած է զայն, Վարչութիւնը երեսօրտանական ժողովոյ պարտաւոր է իւր համարն տալ և ոչ ուրիշ ու է մարմնայ: Վարչութիւնը զԱզգը կը ներկայացնէ և չէ կարող անոր կամաց հակառակ գործել: Մասնաւոր պատգամաւորութիւն մը Վարչութեան միացնելը մեր Սահմանադրական դրութեան չհամապատասխաներ, ասոնք իրատ փաստակ կէտեր են զորս պէտք է նկատողութեան առնուք այսպիսի կենսական որոշում մը տուած ատենին:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Եւսուֆեան ԷՖ. շատ լաւ խօսեցաւ, թէ և Ս. Պատրիարքը ընտրած է զՎարչութիւնն, սակայն Ազգ. Ժողովը պատասխանատու է նա, և հարկ չկայ Վարչութիւնը զատ մարմին մը նկատելու:

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍ. ՆԱՐ-ՊԵՏ. — Ազգային ժողովը խնդիրն Վարչութեան ձեռք Բ. Գրան ներկայացնելու առաջարկը նոր չէ, արդէն ընդունուած սովորութիւն մ'է այս: Այլ քանի որ խնդիրը Ս. Պատրիարք Հօր հրաժարականին վրայ է, զոր ութն ամիսէ 'ի վեր կը մերժեմք, լաւագոյն կերևի ինձ որ Երեսօրտանական ժողովը համակրութեան նոր ցոյց մը Ս. պատրիարքին, իր մէջէն բարձրագոյն եկեղեցականներէ պատգամաւորութիւն մը միացնէ Վարչութեան: Սոյն առաջարկիս վրայ կը պնդեմ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Կը խնդրեմ որ Տ. Մկրեան Հօր առաջարկը բուէի դնէք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այս խնդրոյն վրայ որչափ խօսիմք, դարձեալ խօսելու տեղի կը մնայ: Տ. Մկրեան Հօր առաջարկութիւնն և անոր վերջի սարբերութեան բարեփոխումը լսեցիք, ժողովոյդ անկէ իւր վերջնական որոշումը տալ այս մասին:

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍ. ՆԱՐ-ՊԵՏ. — Ես իմ առաջարկութիւնս կը բարեփոխեմ, այնէ Մայր-Գիւանին յանձնել պատգամաւորութեան ընտրութիւնը:

ՁԱՅՆԵՐ. Ձեմը ընդունիր, չեմք ընդունիր:

ՈՒՐԻԵ ՁԱՅՆԵՐ. — Քո՛ւն, քո՛ւն,

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. ԷՖ. — Եղած են ժամանակներ, յորս բարձրագոյն կղերականք դիմած են Բ. Գրան, ազգին բաղձանքը ներկայացընելու համար, սակայն այդպիսի ճղնաթամի մէջ չ'եմք գտնուիր սյթմ, մենք աղաչանք մը չունիմք ներկայացնելիք, այլ սարգապէս իրաց վիճակը. ուստի Վարչութիւնը կրնայ շատ լաւ Ազգային ժողովը թարգման հանդիսանալ, պատգամաւորութիւն մը ընտրելու հարկ չեմ տեսներ ևս:

ՁԱՅՆԵՐ. — Քո՛ւն, քո՛ւն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Տ. Մկրեան Հօր առաջարկութիւնի քուէի պիտի դնեմ եթէ Վարչութիւնն ուրիշ աւարկութիւն մը չունի:

ԵՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Վարչութիւնը Տ. Մկրեան Հօր առաջարկն նոյնութեամբ կ'ընդունի, եթէ ժողովը ալ բուէարկէ զոյն խնդիրն վերջացուցած կ'ըլլամք:

ՁԱՅՆԵՐ. — Քուէ բուէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Տ. Մկրեան Հօր գրաւոր առաջարկութիւնը եղած բարեփոխմամբ հանդերձ բուէի պիտի դնեմ, բայց թիւրիմացութեան տեղի չտալու համար կրկին կ'ընթեռնում անաւասիկ ամբողջ առաջարկութիւնը:

«Ազգային ժողովը կը յանձնարարէ Ազգ. Վարչութեան որ Բ. Գրան գիմել»

« լով յայտնէ մեր վիճակը, թէ Ս. Պատ-
 « բիսոփքը կը հրատարի և հակառակ Ազ-
 « գին ընդհանուր բաղձանաց կը կրկնէ
 « իւր հրատարում, և սրովհետեւ Ն. Սըր-
 « բաղնու թիւնը Բ. Գուսն ալ հրատա-
 « րական մատուցած է, ուստի Ազգային
 « ժողովը պարտք կը համարի Բ. Գրան
 « ներկայել Ազգին վիճակը, վարչութիւ-
 « նը կրնայ երեսփոխանութենէն ալ մի
 « քանի անձեր հետ առնուլ եթէ պատ-
 « շան դատի » :

Յետ ընթերցման, Ատենապետ Էֆ. քուէի
 կը դնէ սոցն առաջարկութիւնը, որ 4 ի դէմ
 26 քուէով կ'ընդունուի :

Մէլիբեան Մ. Էֆ. սոցն քուէարկութեան
 մէջ ձեռնարկ կը մնայ :

Յ. ՅՈՎ. ՔԱԼ. ՄԿՐԱՆ. — կը խնդրեմ ժո-
 ղովէդ միանգամայն յանձնարարել վարչու-
 թեան որ աթ օրէն մեզ բերէ Բ. Գրան սրա-
 տասխանը :

Ժողովականք կը ձայնակցին Տ. Մկրեան
 2-օր :

Ատեանը կը վերնայ ժամ 7 1/2 ին, ութ
 օրէն վերասին դումարուերու պայմանա :

Ատենադպիր	Բ. Ատենապետ
Մ. ՉՕՊԱՆԵԱՆ	Յ. ԹԻՐԵԱՔԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Կրօնական գործոց խորհրդական Գեր. Տ. Սիմէօն Եպիսկոպոս Սէֆեբեան			
Ներքին գործոց	»	Տիգրան Էֆէնտի Եռասուֆեան Արմ-դէր	
Մարտերական գործոց	»	Միքայէլ	Մօմճեան
Կրթական	»	Միքայէլ	Մամիկոնեան
Գառական	»	Սերոյիբէ	Աղնաւորեան
Տնտեսական	»	Գարեգին	Մէլիք Արմ-դէր

ԿՐՕՆԱՅԻՆ ԱՏԵԱՆ

Գեր. Տ. Գարեգին Վարդապետ Թաթարեան	
» Տ. Յակոբ	Փափաղեան
» Տ. Յովհաննէս Քահանայ	Հիւնրեարդէյէնտեան
» Տ. Սահակ	Տէր Սարգիսեան

ԲԱՎԱՐԱՅԻՆ ԱՏԵԱՆ

Արիկ	Էֆէնտի	Ունճեան
Դրիգոր	»	Ներսէսեան
Թովմաս	»	Խօրասանճեան
Պապի	»	Պապօեան
Սահակ	»	Ղաղարսեան

ՅԻՎԱԿԱՅԻՆ ԿՈՆՍՏԱՆՍՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԳՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

1. — Հրատարադիրք Վիլնէ ԷՓ. Գապարաճեանի և Առաքել ԷՓ. Ալթուն-Տարիի
2. — Բացակայութիւնք .

ՕՐԱԿԱՐԳ

- Ա. Վաւերացումն Երևոյի տօնական ընտրութեանց .
- Բ. Կազմութիւն Մայր Գիւանի .
- Գ. Խնդիր հրատարման Ս. Պատրիարք Հօր .



Առաջին	Երկրորդ	Յրդ
Երկրորդ	»	Յրդ
Երրորդ	»	Յրդ
Չորրորդ	»	Յրդ
Հինգերորդ	»	Յրդ